ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

1951 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱԱԳԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 16 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա. Գեղամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1951 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված՝ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունների՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի հունիսի 18-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կանոնադրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի կանոնադրությունն (այսուհետ՝ Կանոնադրություն) ընդունվել է Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի (այսուհետ՝ Հաագայի խորհրդաժողով) յոթերորդ նստաշրջանում՝ 1951 թվականի հոկտեմբերի 31-ին եւ ուժի մեջ է մտել 1955 թվականի հուլիսի 15-ին:

Կանոնադրության փոփոխություններն ընդունվել են Հաագայի խորհրդաժողովի քսաներորդ նստաշրջանում՝ 2005 թվականի հունիսի 30-ին եւ ուժի մեջ են մտել 2007 թվականի հունվարի 1-ին:

2. Ըստ Կանոնադրության 1-ին հոդվածի՝ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի նպատակն է աշխատել միջազգային մասնավոր իրավունքի նորմերի շարունակական միասնականացման ուղղությամբ:

3. Կանոնադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի անդամներն այն պետություններն են, որոնք արդեն մասնակցել են Խորհրդաժողովի մեկ կամ մի քանի նիստերի, եւ որոնք ընդունել են սույն Կանոնադրությունը: Նոր անդամ պետության ընդունման հարցը որոշվում է անդամ պետությունների կառավարությունների կողմից, նրանցից մեկի կամ մի քանիսի առաջարկով, ձայների մեծամասնությամբ,

առաջարկը ներկայացնելուց հետո 6 ամսվա ընթացքում: Ընդունումն ուժի մեջ է մտնում անդամ պետության կողմից Կանոնադրությունն ընդունելուց հետո:

Կանոնադրության 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հաագայի խորհրդաժողովի անդամ պետությունները ձայների մեծամասնությամբ որպես Խորհրդաժողովի անդամ կարող են ընդունել Տնտեսական ինտեգրման տարածա-շրջանային ցանկացած կազմակերպության, որը գործում է իր անդամ պետությունների կողմից իրեն փոխանցված իրավասությունների շրջանակներում:

4. Կանոնադրության 4-րդ եւ 6-րդ հոդվածներին համապատասխան՝ Հաագայի խորհրդաժողովի ղեկավարումն իրականացնում է բոլոր անդամներից կազմված Ընդհանուր հարցերի եւ քաղաքականության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհուրդն այդ ղեկավարումն ապահովում է Մշտական բյուրոյի միջոցով:

Ընդհանուր հարցերի եւ քաղաքականության խորհրդի ղեկավարման ներքո Մշտական բյուրոն պատասխանատու է Հաագայի խորհրդաժողովի նիստերի եւ Խորհրդի ու ցանկացած Հատուկ հանձնաժողովի հանդիպումների նախա-պատրաստման եւ կազմակերպման, նիստերի եւ վերոնշյալ հանդիպումների քարտուղարության իրականացման եւ քարտուղարության աշխատանքների հետ կապված բոլոր հարցերի կարգավորման համար:

5. Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մաս-նավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- նշանակել ազգային մարմին Հաագայի խորհրդաժողովի անդամների եւ Մշտական բյուրոյի միջեւ հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով (հոդվ. 7),

- մասնակցել Հաագայում գտնվող իր դիվանագիտական ներկայա-ցուցչության միջոցով Խորհրդաժողովի բյուջեի ծախսերի բաշխմանը (հոդվ. 10),

- վճարել Հաագայի խորհրդաժողովի բյուջեի ծախսերի իր մասնաբաժինը (հոդվ. 9),

- վճարել Հաագայի խորհրդաժողովի կողմից որոշված՝ Հայաստանի Հանրապետության հետ բանակցված, իր անդամակցությունից բխող լրացուցիչ վարչական ծախսերը (հոդվ. 9):

Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակում, մասնավորապես, Հաագայի խորհրդաժողովի, ինչպես նաեւ Ընդհանուր հարցերի եւ քաղաքականության խորհրդի եւ հատուկ հանձնաժողովների նիստերին մասնակցող պատվիրակությունների գործուղման ծախսերի (հոդվ.հոդվ. 9 եւ 11) վճարման մասով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերության համաձայն՝ գործուղումների, միջազգային կազմակերպությունների պատվիրակությունների ընդունելության, բնակարանների եւ այլ գույքի վարձակալության ծախսերը չեն համարվում որպես ֆինանսական պարտավորություններ:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովը՝ հանդիսանալով որպես մշտական գործող միջկառավարական կազմակերպություն, կարեւոր դեր է ապահովում միջազգային հանրային իրավունքի կոդիֆիկացման ու միասնական կիրառման գործում եւ նպաստում միջազգային մասնավոր իրավունքի ընդհանուր նորմերի զարգացմանն ու իրականացմանը, մասնավոր իրավունքի տարբեր համակարգերի միջեւ հարաբերությունների համակարգմանը:

Հայաստանի Հանրապետությունը՝ դեռեւս չանդամակցելով Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի այս կազմակերպությանը եւ միաժամանակ օգտվելով վերջինիս կողմից ընդունված կոնվենցիաներին ինքնուրույն միանալու իրավասությունից, վերջին տարիների ընթացքում միացել է այս կազմակերպության մի շարք կոնվենցիաների, այդ թվում՝ Քաղաքացիական դատավարության մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 29-ից), Կտակային հանձնարարությունների ձեւին վերաբերող իրավունքների հակասությունների (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից), Երեխաների պաշտպանության եւ օտարերկրյա

որդեգրման բնագավառում համագործակցության մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից), Երեխայի միջազգային առեւանգման քաղաքացիական մոտեցումների մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից), Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 14-ից) եւ այլն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի կանոնադրությանը միանալը, հետեւաբար, այդ կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը հնարավորություն կապահովի մասնակցել այդ կազմակերպության եւ նրա մարմինների գործունեությանը, միջազգային մասնավոր իրավունքի բնագավառում կազմակերպության մյուս անդամ պետությունների հետ համագործակցությանը, ինչպես նաեւ միջազգային մասնավոր իրավունքի այլ ակտերին ներպետական օրենսդրության համապատասխանեցմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1951 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված՝ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 սեպտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1164